ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

23.09.2020թ. **կնքված** N **ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ**-20/10-1 **գնման պայմանագրի**

ք. Երևան 19.02.2021թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ա. Դավթյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշումը և ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 23.09.2020թ. կնքված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.13 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին հաստատել 2021թ. հատկացված գումարի շրջանակներում կատարման ենթակա աշխատանքների օրացուցային գրաֆիկը և վճարման ժամանակացույցը համաձայն համաձայնագրի հավելվածներ N 1-ի և N 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

Համաձայնագրի հավելված N 1-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը՝ բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝	ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	ք. Երևան, Մամիկոնյանց 24/2
կառավարական տուն 3	<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՀ ֆինանսների նախարարության	Հ/Հ 1930051581030100
աշխատակազմի գործառնական վարչություն	ՀՎՀՀ 03313519
Հ/Հ 900011035822, ՀՎՀՀ 02565827	
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
_____ Ա. Մկրտչյան	_____ Ա. Դավթյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
23.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 գնման պայմանագրի
19.02.2021թ. կնքված N 2 համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման 2021թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների

N	Կատարվելիք աշխատանքների անվանումը	Ծավալը (արտահայտված ՀՀ դրամով)	Աշխատանքների կատարման ժամկետը*
1	Միաձույլ երկաթբետոնե աշխատանքներ	50 000 000	90 օրացուցային օր

**Համաձայնագրով նախատեսված աշխատանքների սկիզբ է համարվում օբյեկտում ապաստարանի կառուցման նպատակով Պայմանագրում համապատասխան փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի կնքման հաջորդ օրը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035822, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Տնօրեն՝

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ
ք. Երևան, Մամիկոնյանց 24/2
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930051581030100
ՀՎՀՀ 03313519

_____ Ա. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
23.09.2020թ. կնքված
N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 գնման պայմանագրի
19.02.2021թ. կնքված N 2 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211231/8	ՀՀ Լոռու մարզի գ. Հագվու հիմնական դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքներ	-	-	-	29 404 100	29 404 100	29 404 100	40 609 300	40 609 300	40 609 300	50 000 000	50 000 000	50 000 000	50 000 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011035822, ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար

_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<ՆԱՎԱՍԱՐԴ ՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ
ք. Երևան, Մամիկոնյանց 24/2
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930051581030100
ՀՎՀՀ 03313519

Տնօրեն՝

_____ Ա. Դավթյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«18» 02 2021

№ 020/0210

Հավելված N 4.1
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N 020/0210
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10 ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) կողմից 23.09.2020թ-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ» (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 50 000 000.00 /հիսուն միլիոն / ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում:

Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված և պրինցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 18.02.2021թ.-ից մինչև բենեֆիցիարի կողմից պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 01.03.2022թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրինցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

010482

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարգանքով՝
Վարկային գործառնությունների բաժնի պետ

Արշակ Խոջոյան

Կատարող՝Ս.Սարոյան
Հեռ;511211/2381/

Հ. ՍԱՐԳՅԱՆ 26/1 * ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐ * V. SARGSYAN str., YEREVAN * CONVERSE BANK CJSC
ՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
FOR CREDIT OPERATIONS

«18» 02 2021

№ CDD/0209

Հավելված N 5
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10» ծածկագրով
բաց մրցույթի հրավերի

ԵՐԱՇԽԻՔ N CDD/0209
(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) և «Նավասարդ Շինարար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ պրինցիպալ) միջև 23.09.2020թ.-ին կնքված N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 «ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ» (այսուհետ՝ պայմանագիր) բխող պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել 5 000 000.00 /հինգ միլիոն / ՀՀ դրամ (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի 900008000664 հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 18.02.2021թ.-ից մինչև պրինցիպալի կողմից ստանձնված պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ, սակայն ոչ ուշ քան 01.03.2022թ. ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/10-1 ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) սույն երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հարգանքով՝
Վարկային գործառնությունների բաժնի պետ **Արշակ Խոջոյան**

Կատարող՝Ս.Սարոյան
Հեռ;511211/2381/

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ ՓԲԸ» * CONVERSE BANK CJSC * Ք. ԵՐԵՎԱՆ, Վ. ՍԱՐՅԱՆ 26/1 * YEREVAN, 26/1 V. SARGSYAN St. ՎԱՐՈՒՅԱՑԻԱՅԻ ԱՌԱՆՁՆԱԿԱՆ ԲԱԺԻՆ FOR CREDIT OPERATIONS